

խանն Գողթան, այր երկիւղած եւ աստուածասեր, որում անուն էր Շաբիթ, եւ ասպնջական հիւրամեծար գտեալ, բարեպաշտութեամբ սպասաւորեր, ըստ աշակերտական հաւատոց ի Քրիստոս: 13 Իսկ երանելոյն վաղվաղակի զաւետարանական արուեստն ի մէջ առեալ, ձեռն արկաներ զգաւազան հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին, եւ գերեալ զամենեսեան ի հայրենեացն աւանդելոց, եւ ի սատանայական դիւապաշտ սպասաւորութենէ՝ ի հնազանդութիւն Քրիստոսի մատուցաներ:

14 Եւ յորժամ ի նոսա զբանն կենաց սերմանեաց եւ զամենեսեան զաստուածապաշտութիւն կրթեալ, յայտնի իսկ բնակչաց գաւառին նշանք մեծամեծք երեւեալ կերպարակերպ նմանութեամբ դիւացն փախստեա լինելով, անկանէին ի կողմանս Մարաց: 15 Ապա եւս առաւել հոգ ի միտ արկաներ՝ զհամաշխարհականս զփալով, եւ առաւել յաղաթս մշտնջենամոռնչս, եւ բազկատարած պաղատանս առ Աստուած եւ արտասուս անդադարս, զմտաւ ածելով զառաքելականն, եւ ասեր հոգալով. *Տրտմութիւն է ինձ յոյժ եւ անպակաս ցաւք սրտի իմոյ, վասն եղբարց իմոց եւ ազգականաց ըստ մարմնոյ՞:*

16 Եւ այնպէս տրտմական հոգւովք պաշարեալ եւ անկեալ ի ծուփս խորհրդոց, եթէ որպէս ելս իրացն գտանիցէ: 17 Եւ իբրեւ բազում անգամ անդէն ի նմին դադարեր, յարուցեալ այնուհետեւ հասաներ առ սուրբ կաթողիկոսն Յայոց Մեծաց, որոյ անուն ճանաչիւր Սահակ, զոր եւ պատրաստական գտաներ նմին փութոյ հաւանեալ, որ մանաւանդ միաբանեալ: 18 Եւ միանգամայն յաւժարութեամբ զումարեալ հանդերձ աղաւթիւք մեծաւ եւ ուժգին ինդրուածովք առ Աստուած կանխէին, վասն ամենայն ոգւոց քրիստոսաբեր փրկութեան հասանելոյ: 19 Եւ զայն առնէին աւուրս բազումս:

20 Ապա ելաներ նոցա պարգեւական պատճառք յամենաբարին Աստուծոյ ժողովել զաշխարհահոգ խորհուրդսն երանելի միաբանելոցն, եւ ի գիւտ նշանագրացն Յայաստան ազգին սահմանեալ:

21 Բազում հարցափորձի եւ քննութեան զանձինս պարապեցուցեալ, եւ բազում աշխատութեանց համբերել, աստ առնէին ապա եւ զկանխագոյն ինդրելին իւրեանց թագաւորին իւրեանց Յայոց, որոյ անուն կոչիւր Վռամշապուհ:

22 Յայնժամ պատմեր նոցա արքայն վասն առն ուրումն ասորոյ եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն գրեալ նշանագիրս ալփափետաց հայերէն լեզուին: 23 Եւ իբրեւ պատմեցաւ նոցա յարքայէ վասն գրելոյն Դանիէլի, յաւժարեացուցին զարքայ՝ փոյթ անել